

ՄՇԱԿ

ՀԱՄԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարվանը 6 ռուբլի.
Առանձին համարները 5 կոպեկով.
Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.
Մեր հասցեն. Тифлиς, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն).
Յայտարարութիւն ընդունվում է ամէն լեզուով.
Յայտարարութիւնների համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Միջոցի և Գէորգ Պետրոսեան Կուզանեանը, Նատալիա Միքայէլեան Շաղինեանը և
Գրիգոր Միքայէլեան Կուզանեանը ցաւօք սրտի յայտնելով՝ առաջիկաները իրանց սի-
բիւրի հօր, իսկ վերջինները իրանց թանգազին եղբոր՝

ՊԵՏՐՈՍ ՄԻՔԱՅԷԼԵԱՆ ԿՈՒԶԱՆԵԱՆԻ

մահվան մասին, խնդրում են ազգակիցներին և ծանօթներին շնորհ բերել երեքշաբ-
թի, փետրվարի 3-ին, առաւօտեան 10 ժամին մարմնի լուղարկւաւորութեանը սեփական
սինից, Բէրուսովսկայա փողոցի վրա № 44 դէպի Մողուս. Գէորգ եղբորհին: Հոգե-
հանգիստը հանդուցեալի բնակարանում, կիրակի և երկուշաբթի երեկոյեան 7 ժամին:
Թաղումը Գորիում: 2—2

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Քաղաքական տեսութիւն.—Ներքին Տեսութիւն.
Թիւն. Մեր պանդուխտները. Հաւաքարի
թաւրօն. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒ-
ԹԻՒՆ. Հեռաւոր Արեւելքում. Պատերազմի շուր-
ջը.—Հեռագրի Գրիգոր. —ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Էմմանուէլ Կանտ:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Հեռագրական լուրերը հակասական տե-
ղեկութիւններ են հաղորդում պատերազ-
մական բեմում տեղի ունեցող գործողու-
թիւնների մասին: Անկասկած, պէտք է
որոշ գզուշութեամբ ու վերապահութեամբ
վերաբերվել այդ լուրերին և վաղաժամ
եզրակացութիւններ չանել իրերի վիճակի
մասին:

Որքան կարելի է բացատրել կուռղ
կողմերի դիրքերը, առ այժմ այսքանը
պարզ է, որ Ռուսաստանը, մտադրութիւն
ունենալով շարունակել իր բանակցու-
թիւնները Նապոլեոնի հետ, դեռ սպա-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՄՄԱՆՈՒԷԼ ԿԱՆՏ

(Մահվան 100-ամեակի առիթով)

Կանտ ընտանիքի մտերիմ բարեկամն էր
Քեօնիքերեզի պատեօր Ալբերտ Շուլցը, որ
Էմմանուէլի աշակերտ ժամանակն արդէն նոյն
քաղաքի կոլլեժի տեսուչն էր և համալսարանի
աստուածաբանութեան պրոֆէսորը: Նա շատ
յաճախ լինում էր Կանտ ընտանիքի մօտ և իր
օրինակով ու խրատներով զօրեղ տպաւո-
րութիւն թողնում մանուկ Էմմանուէլի վրա:
Ալբերտ Շուլցը գերմանական Վոլֆ փիլիսո-
փայի ջերմ հետևորդներից մէկն էր. նա պատ-
կանում էր աստուածաբանական և բա-
րոյական այն դպրոցին, որին կոչում են
Պիեթիզմ կամ պրիմիտիւսական ուղղութիւն:
Այդ տեսակ ուղղութեան տէր մարդկանց
յատկանիշներն են անկեղծութիւն, շիտա-
կութիւն, խստակաց, սակաւապէտ և ան-
զբղիլի բարոյականութիւնով լցված մի
վարք ու բարք, ի հարկէ, էթէ իսկապէս կա-
տարում է իր չօլայի պահանջները: Շուլցն
օժտված էր այդ բոլոր աղբյուրներից: Եւրո-
կութիւններով. նա պիէտիստ էր բառիս լայն
ու խոր իմաստով:

Շուլցը նկատում էր երեսայի դրեղ մտաւոր
կարողութիւնները, դնում է նրան կոլլեժ, և
այնտեղից էլ յանձնում համալսարան, մոցնե-
լով նրան աստուածաբանական ֆակուլտետը,
յուսալով դարձնել նրանից մի մարտնչող պիէ-
տիստ « ի փառս լուծիքական սուրբ եկեղեց-
ւոյ»: Բայց համալսարանում Կանտը շուտով
տարվում է մաթիմատիկայով և փիլիսոփա-
յութիւնով: Այսպիսով Շուլցի նպատակը չէ
աշոյղվում, բայց նրա ազդեցութիւնը Կանտի
վրա երևում է ամէն տեղ—մանաւանդ նրա
խիստ ու ծայրահեղ, նոյն իսկ բռնակալ բա-
րոյական վարդապետութեան մէջ: Այդ բարո-
յական փիլիսոփայութիւնը պարզապէս յիշեց-
նում է Շուլցի պիէտիզմը:

Շուլցը Վոլֆի հետևորդներից էր. նա կար-
ծում էր, թէ հնարաւոր է իրար հետ հաշ-
տեցնել հաւատը եւ գիտելիքը. նա հա-

տում էր թէ ինչ եղբ կը ստանան այդ
բանակցութիւնները, ուստի և կարգա-
դրութիւններ չէր անում գինաշարժի
սկզբնաւորութեան մասին, մինչդեռ Նա-
պոլեոն նախաձեռնել էր իր համար մօտա-
լուտ պատերազմի օրերը և հէնց որ խը-
գեց իր դիպլոմատիական շարքերով ին-
ները, յանկարծուտ, առանց ժամանակ
տալու հակառակորդին, ամենամեծ արա-
գութեամբ շարժեց իր նաւատորմը և
գործերը: Եւ զարմանալի չէ, էթէ առա-
ջին քայլերը նպատաւոր են ետպահու-
նների համար: Սակայն պատերազմը միայն
նոր է սկսվում և նա երկար շաբաթներ
ու ամիսներ պէտք է տէ: Պէտք է գոր-
քեր անցնեն հարկաւոր մղուններ մի-
մեանց հանդիպելու և ամուր դիրքեր
բռնելու համար: Զինուորական տուրու-
թիւնը, կարգապահութիւնը և անձնու-
րութիւնը, բանակների խելացի գործա-
վարութիւնը և հեռաւոր կարգադրու-
թիւնները ցոյց կը տան իրանց համեմա-
տական ոյժը միայն յետոյ, երբ զօրա-

մուղված էր, որ կարելի է վերջ դնել
կրօնի և գիտութեան այդ կատաղի ու բազ-
մաղաւթան վէճին. մի ձգտում, որին չէ վի-
ճակված երբէք իրականանալ, որովհետև կրօ-
նը մարդու խելքի բացասական կողմն—նրա
չի գիտեցաւ, նրա անմահականութեան ար-
դիւնքն է, իսկ գիտութիւնը՝ նրա ուղիղ դա-
կան կողմն, նրա բնականաւոր ուժի արտադ-
րութիւնն է: Սրանք իրար հակասող, իրար
ջնջող տարրեր են—երբէք չեն կարող հաշո-
վել իրար հետ: Բայց մեծ Կանտն էլ համոզ-
ված էր, իբր Շուլցի ազդեցութեան տակ մե-
ծացած մարդ, որ մարդկային հոգու կամ ու-
ղիղ այդ երկու խոշոր նահանգները—մէկը
լոյսի, յայտնութեան նահանգը, միւսը խա-
ւարի, անյայտութեան ու երկարութիւնների
աշխարհը—կարող են իրար հետ հաշտվել, մի
և նոյն դատողական, քննադատական մեթոդին
ենթարկվել... Եւ այդ և Շուլցի ազդեցութեան
հետևանքն էր:

Երբորդ մարդը, որ ունեցել է նոյնպէս զօ-
րեղ, գուցէ և վճռական ազդեցութիւն Կանտի
վրա, դա եղել է իր երիտասարդութեան ըն-
կեր Կնուցցը: Սա 10 տարով մեծ էր Կանտից
և նրանից շատ աւելի զարգացած: Նա խոր
ուսումնասիրել էր Իւմի, Լեյպցիցի, Սպինո-
զայի, Դեկարտի, Նիւտոնի և ուրիշ շատ փի-
լիսոփաների գործերը:

1746 թւին Կանտն աւարտում է համալ-
սարանը և նոյն տարին էլ մեկնում է նրա
հայրը և Կանտն ստիպված է լինում ապրուս-
տի համար մտածել: 9 տարի նա լինում է
երեք ընտանիքի մէջ ուսուցիչ թէ քաղաքում
և թէ քաղաքի մօտ եղած գրեհներում:

Ծնած լինելով 1724 թւի ապրիլ 22-ին, նա
22 տարեկան հասակում կենքի մէջ մտաւ:
Նրա առաջին գործերը չեն եղել փիլիսոփա-
յութեան, այլ աւելի շատ գլուտ գիտական: Այս-
պէս 1755 թւին նա առաջին անգամ հրատա-
րակեց իր մի հոգնակար գործը—«Ընդհա-
նուր Բնագիտութիւնը և երկնքի թէօրիան»
վերնագրով, մի թէօրիան, որ մինչև այսօր էլ
ընդունված է գիտութեան մէջ և կոչվում է
կանտ-յալլաանական կոսմոգոնիական թէօրիա:
Նա բացատրում է երկնային լուսատուների,
արեգակնային սիստեմի և երկրի ծագումն ու

գնդերը կը մօտենան ընդհարման րօպէ-
ներին: Ռուսական զօրքերի յաղթական
ոյժը մինչև այժմ երկացել է ցամաքի
վրա, որտեղ նա կարողացել է դիմանալ
երկարատև և յամուռ մաքառումների ըն-
դարձակ տարածութիւնների վրա:

Անշուշտ ցամաքի ամենաէական և
զգայուն տարածութիւններից մէկը պէտք
է համարել այն, որ ձգված է մանջուրա-
կան երկաթուղային գծի ուղղութեամբ:
Նապոլեոնիցները, ըստ երևոյթին, փորձե-
ր են ուզում անել ֆրանսիական հեռագրական
սիւններին և կամուրջներին: Սակայն,
ինչպէս տեղեկացնում է այսօրվայ պաշ-
տօնական հեռագիրը, Հեռաւոր Արեւելքի
փոխարքան ամենակարգական միջոցներ է
ձեռք առել երկաթուղու պաշտպանու-
թեան համար:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՄԵՐ ՊԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Ռազարութիւնը ծանր արհեստ է»,—գու-
ցէ մտածում են շատերը մեր գաւառի պան-
դուխտներից և մէջքները չեն ուզում կոպտել
գութանի մաճը բռնելու՝ հողը հերկելու համար
և այդ աշխատանքից փախչելով գնում են
մեծ քաղաքները գուցէ աւելի թեթև ու հան-
գիստ աշխատանքով փող վաստակելու և ըն-
տանիք պահելու համար: Թերևս այդ թեթև
աշխատանքը շատերին գոհացնում չէ տալիս
և նրանց յոյսերը յաճախ ապարդիւն են անց-
նում:

Կասկած չը կայ, որ պանդուխտներից շա-
տերը, յուսալարվելով իրանց նպատակների
մէջ և հայրենիք վերադառնալով օտարավայ-
րաբացումը: Դա մի հաստատված, ապացույ-
ցված թէօրիան չէ, այլ մի հաւաքական ենթա-
դրութիւն, մի հիպոթէզ:

Նա տուել է կրակի, երկրաշարժի, երկրի
«ծերանալու», երկրի իր անցքի շուրջը դառ-
նալու մասին գիտական գրութիւններ ևս, բայց
այդ բնագիտական գործերը չեն նրան անմա-
հացնում, այլ նրա փիլիսոփայութիւնը:

1755 թւին նա գրվում է համալսարանի իբր
պրիվատ-դոցենտ, բայց իսկական պրոֆեսո-
րութեան արժանանում է միայն 15 տարի
յետոյ, 1770-ին, 46—47 տարեկան հասակում:

Չը նայելով իր հիւանդոտ, վաղու մարմնին
ու թոյլ ձայնին, դասախօսութիւնները զրա-
ւում էին հնազանդ բազմութիւն, որովհետև
նման չէին նրա ժամանակակից միւս պրո-
ֆեսորների կարգացած շարժական, սովորա-
կան զրոյցներին: Նրա ամեն մի դասախօսու-
թիւնը մի նոր հոսանք էր ապագայում,
մի նոր նահանգ է բացանում XVIII դարի
մետաֆիզիկայով սնված գերման երիտասար-
դութեան համար: Նրան չէին լսում, այլ կլա-
նում էին նրա ասածները, ոգևորվում նրանցով:

Նրա իսկական առարկաներն էին լոգիկան
և մետաֆիզիկան, բայց նա կարողում էր
մաթիմատիկայի, ֆիզիկայի, բնական իրա-
ւունքի, բարոյագիտութեան, ֆիզիքական աշ-
խարհագրութեան, աստրոնոմիայի, բացի-
նալ աստուածաբանութեան մասին: Ամեն տեղ
նրա լսարանը լիքն էր լինում: Գանի դեռ
լուսաւորութեան միջոցաւ նրա դասախօսու-
թիւնները լսած նախնիքն ուսանող Թոմ-Յին-
դէն էր, Կանտի պատիւը բարձր էր: Նրան
առաջարկեցին կրկնակի ուժեղացնել հա-
մալսարանը, բայց Կանտը մերժեց: Բայց
երբ մինիստր դարձաւ յետագիւղ կղերական
Վեօնիցը, Կանտի լեզուն կործանեց: Նա
ստացաւ Ֆրիդրիխ-Վիլհելմ II-ից մի խիստ
յանդիմանութիւն և խոստացաւ այլ ևս ոչինչ
չը խօսել ու չը գրել կրօնի մասին: Այդ յան-
դիմանութիւնը պատճառ տուեց Կանտին թող-
նել լոգիկայով և մետաֆիզիկայով, իսկ 1797
թւին, զգալով արդէն ծերութեան բերք, թո-
ղեց համալսարանը և քաշվեց: Նա մեռաւ 1804

րերից, ներկայացնում են մեղեդաւոր կամար
դարձած տիպեր, որոնք իբր յոգնած-մաշված
էակներ երկար ժամանակով անընդունակ են
լինում մի որ և է աշխատանքի կաշկելու, մի
որ և է գործի ձեռնարկելու, մինչև որ գաւառա-
կան առողջ կլիմայի ազդեցութեան տակ կազ-
դուրվում են և ապա սկսում իրանց աշխա-
տանքը: Սուր չը կայ, որ երբ պանդուխտնե-
րից շատերը վերադառնում են տուն, և ձգտում
են իրանց սովորական դաշտային պարապ-
մունքին՝ իսկայն վերականգնում են իրանց
հողագործական դարձած աշխատանքները և
մի կտոր հաց հասցնում իրանց ընտանիքին
հալալ և քաղցր կերպով, իսկ ընտանիքը, կա-
կած չը կայ, լցվում է անհուն բերկրութեամբ,
ուրախանում է իր կարօտը առնելով իր պան-
դուխտ անդամից և բազմապատկում է:

Ինչպէս յայտնի է մեր պանդուխտները բա-
ցառապէս միջին և ստորին դասակարգի ան-
դամներ են, որոնց ընտանեկան կազմակերպու-
թիւնը—պէտք է խոստովանել—այն բաւարա-
րութիւնը չէ ներկայացնում, ինչպէս, օրինակ,
իրանց հարեան ընտանիքները: Բայց և այն-
պէս նրանք, դիմելով դէպի օտարութիւն, թէն
ի նկատի ունեն վերականգնել իրանց բայցա-
ված տնտեսութիւնը և գուցէ հարստանալ,
սակայն զբաւով նրանք աւելի անկման են են-
թարկում իրանց ընտանեկան կազմակերպու-
թիւնը, մատնելով աւելի աղքատութեան,
աւելի դառն վիճակի, քանի որ նրանց դաշ-
տային հողագործական աշխատութիւնները ե-
րեսի վրա են մնում քան առաջ էին: Մի խօս-
քով պանդուխտութիւնը ոչ մի բարիք չէ խոս-
տանում մեր գաւառի օտարականներին համար,
որոնք գուրդ են տնից ու տեղից, հօրից ու
մօրից, քաղցր ամուսնիներից, սիրասուն գա-
ւառներից, բարեկամ—ազգակիցներից և մա-

թւի յունվարի 30-ին (փետրվարի 12-ին) և
թաղվեց իր մայրենի քաղաքում: Մինչև այժմ
էլ կայ նրա գերեզմանը, և այդ վայրը կոչ-
վում է Stoa Kantiana:

Կանտն իր գիտական և փիլիսոփայական
աշխատանքը համարում էր իր միակ կոչումը
և զբաղից գուրդ ոչինչով չէր հետաքրքրվում:

Հաստատ կամքի շնորհով Կանտը կարողա-
ցաւ իր թոյլ ու տկար առողջութիւնն ամ-
բայնել և մինչև 80 տարեկան խոր ծերու-
թեան հասնել: Նա մեքենայի ճշգրտութեամբ ա-
մեն օր իրենից պահելով գնում էր ոտով մի և
նոյն տեղեկով զօրանելու: Մի անգամ միայն
նա շեղվեց իր այդ սովորութիւնից, այն էլ իր
ոչ պակաս հանճարեղ ժամանակակից—Ժան-
ժաք-Բուսոյի «Նոր էլօրիզ» վէպը կարդալու
համար: Եթէ ոչ նա այնպիսի ճշգրտութեամբ էր
կատարում իր զբօսանքը, որ տեղացի խա-
նութպաններն իրանց ժամացոյցները լսում
էին նրանով:

Ամբողջ կեանքն անցկացնելով վերացական
գաղափարների հետ, նա մի տեսակ զուրկ էր
գեղեցիկի ճաշակից: Մուգիկան նրա համար ան-
տանելի էր, նկարչութիւնը, բանականագործու-
թիւնը, ճարտարապետութիւնը չէին հետաքր-
քրում նրան և չէին ասում ոչինչ նրա հոգուն:
Բանաստեղծութիւնից էլ նա շատ քիչ ճաշակ
համ էր առնում. նա սիրում էր միայն քաղ-
զող կամ գիտաբանական բանաստեղծութիւ-
նը: Կանանց հասարակութեան մէջ նրա խօ-
սակցութեան համարեւ միակ առարկան խոհա-
բարական արհեստն էր. շատ էր սիրում նա խօ-
սել կանանց հետ միայն կերակուրների մասին...

Այն մարդը, որ ցնում էր երկինքն ու եր-
կիրը, մարդկային մտքի ամենախոր ու զօրա-
ւոր կարողութիւնները, այն մարդը, որի լո-
գիկան թափառում էր փիլիսոփայութեան և
բնութեան ամենաանթափանցելի անցքերն ու
շերտերը—այդ նոյն մարդը գործնական կեան-
քի մէջ մի միամիտ, մի պարզամիտ արարած
էր. նրան խաղած էին նոյն իսկ մանրիկ երե-
կանքը: Կանաքը, գործնական, կրթող կեան-
քը նրան չէր հետաքրքրում. նա լոկ ուղեղ
էր, և ապրում էր ամպերի մէջ, լոկ իդէալիս-
րով—գաղափարներով:

Պատակ

նաև անդ մարտը օդ ու ջրից և առողջարար կլիմայից... Թող բարոյական կողմը, որի հա- մար մեր նպատակից դուրս է այստեղ խօսել:

Գ. Մինասեանց

Կոր-Բայադէտ

ՀԱՅԻՆԱԳԱՐԻ ԹԱՏՐՈՆԸ

Շարաթ, յունվարի 31-ին, Հաւարարի նոր թատրոնում խաղացից Օստրովկու «Աննի մեղաւորներ» պիէսը: Այս անգամ ներկայա- ցումը ունէր առանձին հետաքրքրութիւն, որով- հետեւ մասնակցում էր տ. Սերանոյշը. ուստի և թատրոնը զբաւել էր հասարակութեան մեծ բազմութիւն, այն աստիճան, որ շատերը ոտքի վրա էին մնացել: Տիկին Սերանոյշը, որ կա- տարում էր Կրուշինայի դերը, մեծ ապաւո- րութիւն արեց և ստացաւ թարմ ծաղիկ փունջ ու որոտազին ծափահարութիւններ: Տ. Աննի-ը Կորնիլիւսայի փոքրիկ, բայց սիրելիքական, դերում, պ. Ալիխանեան Նեզնամովի պատասխա- նատու դերում, պ. Արաքսեանը Շմազայի դերում շատ բաւարար էին: Ընդհանրապէս խաղը լաւ անցաւ և գոհացրեց հասարակու- թեան:

Մի քանի խօսք աֆիշների մասին. Մուրաշ- կոյի թատրոնում և Թիֆլիսի ժողովարանի թատրոնում ծրագրերը չեն վաճառվում, այլ ձրկաբար բաժանվում են հասարակութեանը: Ժողովուրդը կարգում է նրանց և հետաքրքը- վում գործող անձերով, գաղափար կազմում թէ պիէսի և թէ դերասանի մասին: Մինչ- դեռ պ. Արաքսեանի թատրոնում, որտեղ ծրա- գրերն էր ծախվում են, մնում են ծառաների ձեռքում անվաճառ, որովհետեւ այս թատրոնի յաճախորդների համար նրանք թանկ են: Վեր- ջին ներկայացման ժամանակ ծախվող ծրա- գիրն էլ բոլորովին անպէտք էր, որովհետեւ չորս դերակատար փոխված էին:

Յ. Ն.

ՆԵՐՈՒՆ ԼՈՒՐԵՐ

Կարմիր խաչի ընկերութեանը նուիրել են Հեռուոր Արեւելքում գործող բանակի առողջա- պահական և հիւանդապահիկ պէտքերի համար. 1) նորին պայծառապալարութիւն գնեւալ-ա- դիւտանտ իշխան Գրիգորի Սեբեդեիշ Գօլի- ցին—3000 ռ. 2) նորին պայծառապալարութիւն իշխանուհի Մարիա Ֆեօփօրովնա Գօլիցինա— 2,000 ռ.:

Երէկ, փետրվարի 2-ին, Թիֆլիսի Միքա- յէլեան փողոցում զինուորական մեծ տոն կա- ր: Այդ օրը Թիֆլիսի գործը հրաժեշտ էր տալիս այն զօրաբաժիններին, որոնք հանված են տեղա- կան գնդերից և մի առանձին բաժնախում կազ- մելով՝ ուղարկվում են պատերազմի դաշտը: Վաղ առաւօտից Միքայէլեան փողոցում նկա- տելի էր մեծ շարժում: Պատերազմը գնացող զօրաբաժինները մուգիկայով գնացին իւնկեր- ների դպրոցի մօտ գտնվող հրապարակը, ուր հաւաքվեցին և ճանապարհ դնող զօրաբաժին- ները: Իրանց մուգիկայով գնացին նոյն տեղը և կլասիկական գրիֆաղկաների, բէալական դպրոցի բարձր դասարանների աշակերտները: Իւնկերների հրապարակի առաջ փողոցը լին էր անագին բազմութեամբ: Հրապարակի վրա բացված էին սեղաններ գնացող զինուորներին ճաշով հիւրասիրելու համար: Հանդէսին ներ- կայ էր իշխան կառավարչապետը: Հոգեւորա- կանութիւնը մաղթանք կատարեց, հրաժեշտի ողջոյնը սրատուռ էր: Ժողովուրդը «ուռ» էր կանչում: Թիֆլիսի քաղաքային վարչու- թեան կողմից պատերազմը գնացող զօրքերին ամուտեցից ա. Գ. Գեղը զօրավարի պատկերը: Բոլոր զինուորների և օֆիցերների համար պատ- բաժնաները մուգիկայով անցան Միքայէլեան փողոցով, Վէրայի կամուրջով Գօլովիսիկի պրօսպեկտ: Փողոցները երկու կողմերով դը- ուում էին ժողովրդի մեծ խմբեր, որոնք թըն- ղացում էին օդը ուռնալով, երբ մուգիկան նուագում էր «Божье Царя Храни!»: Հանդէսը ձգված էր երկար տարածութեան վրա: Հա- նելով կառավարչապետի պալատին, զինուորա- կան հանդէսը կանգ առաւ: Իշխան Գօլիցին ողջունեց զինուորներին և օֆիցերներին, ապա հանդէսին մասնակցող զինուորական բաժիննե- րը գնացին դէպի իրանց զօրանոցները, իսկ մի մասը, օֆիցերներին հետ, վերադարձաւ Գօ- լովիսիկի պրօսպեկտով: Մուգիկան նուագում էր ազգային հիմնը, ժողովրդի և զինուորա- կանների ուռնալով անհրճառ տարածվում էին փողոցի մէջ: Յոյնք թողնում էր մեծ տը- պաւորութիւն:

Կովկասի բոլոր քաղաքները՝ ուղղափառ և այլ դասաւորութեան եկեղեցիներում ու մզկիթ- ներում կատարվել են մաղթանքներ ուսական զէնքին աղոթութիւն հայցելու համար: Շատ տեղերում ամբողջ ողբերկով ցոյցեր է արել:

Թիֆլիսի ազնուականութեան մէջ, «Ноб. Օбоз.»-ի ասելով՝ միտք է յղացել Հեռուոր Արեւելք ուղարկել մի առողջապահիկ խումբ: Այդ հարցը ընտելութեան պէտք է ենթարկվի առաջիկայ արտակարգ ընդհանուր ժողովում:

Այսօր, երեքշաբթի, փետրվարի 3-ին, հայոց զբաւառիկական ընկերութեան խումբը կը տայ իր վերջին երեկոյեան ներկայացումը ի նպատակ դերասան Տէր-Դաւիթեանի խորհրդա- ների խումբ բազմութիւն: Մաղթանքից յետոյ բաղադրուի մի քանի խօսքով բացատրեց պատերազմի ներկայ դրութիւնը և նշանակու- թիւնը. ապա քաղաքի կողմից պատրաստակա- նութիւն յայտնեց ամեն րօպէ ծանայելու Թա- զաւոր Կայսրին: Դրանից յետոյ քաղաքապետի առաջարկութեամբ որոշվեց մի հեռագիր ու- ղարկել Թազաւոր Կայսրին, արկանելով առ- ռոտ Նորին Կայսերական Մեծութեան իրանց զգացումները և պատրաստակաւութիւնը ամեն րօպէ ծանայելու նրան:

Քաղաքային վարչութիւնը նուիրում է Յաղ- թական Ս. Գեղորդի արծաթէ պատկերները Հեռուոր Արեւելք գնացող արեւեան-սիրելիա- կան 34-րդ գնդի 4-րդ զօրաբաժնի օֆիցեր- ներին:

Կարմիր խաչի խմբերի մէջ, բացի բժիշկ- ներից, ֆելդշերներից, գիթութեան քոյր ու եղբայրներից՝ ուղարկ են հրաւիրել մասնակ- ցելու և զինուորական բժշկական ձեռնարանի հինգերորդ կուրսի ուսանողներին:

Դուռայի այսօրվայ նիստում, ինչպէս մեզ հաղորդում են, պէտք է կայանայ քաղաքային վարչութեան պակասորդ անդամի ընտրութիւ- նը: Քուէարկվելու են բժիշկ Ա. խաւարեան և իշխան Ն. Ն. Արդուրիկի:

«Т. ЛИСТ.»-ին գրում են, որ Ջուլֆայի մօտ Երասխը սառել է: Ապրանքների և պօստի տե- ղափոխութիւնը կանգ է առել: Պարօմը, որ փոխադրութեան միակ միջոցն է, անագին չեղտ ստուգով է պատած: Վերջին օրերս արդէն գետի միջին հոսանքը բացվել է և Մայր-Ա- լաբը կատարած ջրում է անագին սառցակոյ- տեր:

Թերեքի նահանգի օսերը և ինգուշները, «Казбек» լրագրի ասելով՝ խմբով գիւղում են տեղական իշխանութեանը, որ իրանց ու- ղարկեն հեռուոր Արեւելք իր կամաւս զին- ւորներ:

«Русск. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ վի- բարոյս պրօֆէսոր Ն. Վ. Պալլովը Կարմիր խաչի դաշինքում կը կարգայ մի շարք դասախօսու- թիւններ՝ պատերազմական վերաբուժութեան մասին՝ մասնաւորապէս Հեռուոր Արեւելք գնա- ցող բժիշկներին համար:

Նօրէկ եղբայրները մտադիր են, «Закасп. Обозрѣніе» լրագրի ասելով, աւտօմօբիլով հաղորդակցութիւն հաստատել Ասիաբարդի և Մեհեդի մէջ, որովհետեւ ներկայ փոխադրական միջոցները շատ անբաւարար են և օր օրի վրա արագ աճում է նաւթի փոխադրութիւնը դէպի Պարսկաստան:

«Իվլերի» լրագիրը հաղորդում է, որ Գու- բիայի գերդերում (Օզուրգէթի գաւառ) կա- բիլը սաստիկ աճում է. երկիրը կայ, որ կա- բիլը է սով տարածվել:

Պետական և ուրիշ արժէքաւոր թղթերի ընկելը, «Русск. Вѣд.»-ի ասելով, զարհուրե- լի սարսափ է առաջ բերել: Անագին թուով մարդիկ թափված են Պետական բանկի առաջ և փողի են ուղարկ վերածել իրանց թղթերը: Բոլոր թղթերը յունվարի 27-ին արդէն 130% կորցրել էին իրանց արժէքից:

Մօսկվայում, փետրվարի 6-ին, ժողովրդական ընդհանուր զարգացմանը նպաստող ընկերու- թիւնը Պատմական թանգարանի լսարանում զբաղւած առաւօտ է կազմելու: Յերեկոյթի սկզբում պրօֆէսոր Դ. Ն. Գօրօշնինը կը կար- դայ մի ընդարձակ դասախօսութիւն Եապօ- նիայի մասին՝ ցոյց տալով բազմաթիւ պատ- կերներ մոգական լապտերի միջոցով:

Հաղորդակցութեան ճանապարհների մինիս- տրութիւնը, «НОВОСТИ» լրագրի ասելով, ծրա- գրում է հիւանդ և բուժակաւով երիտանդին տեղափոխել է ժամացրած գնեւով դէպի բու- ժարաններ, ամառային գաղութներ և հանքա- յին ջրեր: Մինիստրութիւնն այդ առիթով դի- մել է երկաթուղային վարչութիւններին հա- տարեւելու և իրան հասցնելու հարկաւոր վիճա- կազբաւան տեղեկութիւններն այդ մասին:

ԱՆԷՐՄԱՆԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ մեզ գրում են. «Յուն- վարի 30-ին, շաբաթ օրը, քաղաքային խորհր- դարանի դաշինքում մաղթանք կատարվեց ներ- կայ պատերազմի աղոթութեան համար: Ներկայ էին՝ քաղաքապետը, քաղաքային խորհրդա- ների անդամներից մի քանիսը և քաղաքացի- ների խումբ բազմութիւն: Մաղթանքից յետոյ քաղաքապետը մի քանի խօսքով բացատրեց պատերազմի ներկայ դրութիւնը և նշանակու- թիւնը. ապա քաղաքի կողմից պատրաստակա- նութիւն յայտնեց ամեն րօպէ ծանայելու Թա- զաւոր Կայսրին: Դրանից յետոյ քաղաքապետի առաջարկութեամբ որոշվեց մի հեռագիր ու- ղարկել Թազաւոր Կայսրին, արկանելով առ- ռոտ Նորին Կայսերական Մեծութեան իրանց զգացումները և պատրաստակաւութիւնը ամեն րօպէ ծանայելու նրան:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԵՌՈՒՆՈՐ ԱՐԵՎԵԼԻՔՈՐ

Ե Ս Պ Օ Ն Ի Ա

(նախնականութիւն)

Ներկայումս երազմայում շատ գեղեցիկ կեր- պով իւրացրել են թէ երօպական զգեստները և թէ սովորութիւնները: Եապօնական հին փախթիւնը, որոնց վրա ծալապատիկ նստում էին ներկայ եապօնացիների նախնիքը, այժմ դուրս են ընկել գործածութիւնից և նրանց տեղը ընդել են երօպական սեղաններն ու ա- թոնները, զիմաններն ու բազմաթոնները: Կո- բել են արդէն հին փայտէ կոշիկները և եա- պօնական կանանց հին զգեստները: Նրանք այլ ևս չեն ածիլում իրանց գլուխները՝ ինչպէս աւանդաբար անում էին առաջ:

Միկաւոր, որ առաջ ապրում էր իր պալա- տում Թիւրքիայի սուլթանի նման իբրեւ մի բանտարկված, որին առաջ մօտենում էին ծուռ չորած կամ փորսող տալով՝ այժմ ճա- նապարհորդում է իր ամբողջ կայսրութեան մէջ՝ ազատ, բայց կառք նստած ման է գալիս Տօկիօի փողոցներում, հասարակ մարդու նման սե սիւրտուկ հագած: Երկար ծէսերն ու ձեա- կանութիւնները բոլոր երօպական լեզուներ- րում կրում են «չինական ձեւեր», ԿԻՏԱՅԻՆԱ, chinoiserie անունը, որովհետեւ Չինաստանում չափազանց բարդ ու երկար են այդ ձեւերը, ազնուականութեան ու պալատի մէջ ընդուն- ված ցերեմօնաւոր: Եապօնական ցերեմօնաւոր- ները չինականից ոչնչով պակաս չեն մինչև անցած դարի կէսերը, իսկ այժմ նրանք չըա- ցել են և նրանց տեղը ընդել են պալատում, մինիստրների մէջ, ազգային ժողովներում և այլն՝ երօպական պարզ ու անպաճոյճ, բայց խիստ քաղաքավարի ձեւերը:

Եապօնական գրականութիւնը բաւական տ- րագ հարստացաւ: Ինչպէս արդէն ասացինք, կառավարութիւնն անգամ սկսեց պաշտօնա- պէս հրամաններ տալ իր մարդիկներին՝ թարգ- մանել երօպական լեզուներից բազմաթիւ հանրօգուտ գրվածքներ: Երօպայում և Ամե- րիկայում ուսում առած բազմաթիւ երիտա- տարները վերադարձան: Եւ այժմ էլ վերա- դառնում են իրանց հայրենիքը, ուր կենանք, կենդանութիւն ներշնչում իրանց երկրի հա- սարակական կենանքի բոլոր մասերում: Այժմ էլ երօպական համալսարաններում վիստում են այդ գեղանգուն, մանր ու խելացի աշներով, կարճ հասակով, ճարպիկ երիտասարդները: Նրանց սիրած մասնագիտութիւններն են՝ գործնական գիտութիւնները—քիմիա, էլէքտրո- տեխնիքա, ինժեներական արհեստը և այլն. իսկ համալսարանական մասնագիտութիւններից ամենից շատ ուսումնասիրում են նրանք իրա- տարանութիւն և բժշկութիւն:

Ահա այդ ուսանող երիտասարդութիւնը տուել է և տալիս է զբաղմանագէտների մի ամբողջ բանակ, որը լոյս է պիտում եապօնա- կան ազգի մէջ: Եապօնական մամուլն էլ այժմ զուտ երօպական կերպարանք ունի: Այնտեղ հրատարակվում են բազմաթիւ լրագրիւններ, շաբաթաթիւթեր և ամսագիրներ: Չինական գիրը չէր կարող չը խանգարել մամուլի տղազրու- թեան ու զբաղմանութեան զարգացմանը. և ա- հա եապօնացիները թափ տուին դարեւոր նա- խապաշարմունքները, դէն շարտեցին այդ չի-

նական դժուար ընթեանելի հիերոգլիֆները և ընդունեցին լատինական տառերը, լրացնելով նրանց իրանց լեզուի պահանջներին համեմատ: Եապօնայի և Եւրօպայի մէջ առևտրական ահապին յարաբերութիւններ կան: Նա ահա- զին ու փայլուն յաղոթութիւնով մասնակցեց 1878-ի, 1889-ի և 1900-ի պարիզեան համաշ- խարհային ցուցահանդէսներին, ուր նրանք զարմանք էին ազգում քաղաքակիրթ եւրօպա- ցիներին իրանց գեղեցիկ արհեստների հաշա- վի արտադրութիւնով, մանաւանդ փայտէ նուրբ շինվածքներով, մանր անական զարդարանքե- րով, գեղեցիկ հովաքներով և այլն:

(Կը շարունակվի)

ՊԵՏԵՐԱԶՄԻ ՇՈՒՐՋԸ

—Եւրօպական մամուլի արտայայտած կար- ծիւնների մէջ ուսուեապօնական ընդհարման առիթով, ուշադրութեան արժանի է «Hambur- ger Nachrichten» լրագրի կարծիքը, որովհետեւ այդ լրագիրը դեռ պահպանում է Բիսմարկի աւանդական քաղաքականութիւնը: Նա ասում է. «Այն պայմանները, որ Եապօնիան առա- ջարկեց Ռուսաստանին այնպէս են, որ կարե- յի է առաջարկել միայն պարտութիւն կրած և ջարդ ու փշուր եղած հակառակորդին: Այդ ցոյց է տալիս, որ Եապօնիան դիտմամբ պատ- բաստում էր մերժումն և ձգտում էր պատե- րազմի: Եթէ Ռուսաստանը ընդունէր այդ պայ- մանները, այդ կը նշանակէր, որ նրա հեղի- նակութիւնը Արեւելքում ընդմիջող կրած է և բոլոր այն զոհերը, որ նա արել է վերջին տա- րիները, անպատու են: Եապօնիան չը պէտք է մոռանայ, որ նա վտանգաւոր խաղ է խաղում և եթէ նա յաղթվի, ընդմիջող կը կորչէ նրա դերը, իբրեւ առաջադիմող պետութեան: Անդ- լիսն չէ կարող նրան փրկել, որովհետեւ նա ինքն կընենի այնպիսի ընդհարումներ մէջ, որոնց դէմ դնելու նա ոյժ չի ունենայ:»

—«Новое Время» լրագիրը հաղորդում է, որ Եապօնացիների շօվինիզմը սաստիկ զբաղված է: Այդ առիթով լրագիրը առաջ է բերում «Дальный Восток» թերթից հետեւող նկա- տողութիւնը. «Սիբո-Սարո», եապօնական պատ- դամաւոր և հրապարակախօս, համոզված, ինչ- պէս և ամբողջ երիտասարդ Եապօնիան, Մի- կադօի յաղթական զօրքերի աղոթութեան մէջ, հրատարակել է գիրք «Եապօնա-ուսական պա- տերազմ» վերնագրով, որի մէջ այնպէս է որո- շում Հեռուոր Արեւելքի ապագայ վիճակը:

1) Ռուսաստանը կը հրաժարվի բոլոր իր բա- ցատիկ իրաւունքներից Մանջուրիայի վրա: 2) Չինաստանը կը պարտաւորվի հրաւիրել վարչական խորհրդակցանք Եապօնիայից, Անգլիայից և Ամերիկայից, բէօքսմեր մըտոց- նելու համար Մանջուրիայում և կը բանայ ամ- բողջ Մանջուրիան առևտրի համար: 3) Եապօ- նիան կը տեղաւորէ իր զօրքերը Մանջուրիա- յում եօթ տարի ժամանակով, չինական կայս- րութեան հաշուով: 4) Ռուսաստանը կը դիշէ Եապօնիային Սախալին կղզին: 5) Պրիմօրեան շրջանը կը յայտարարվի անկախ երկիր: 6) Չինաստանը տալիս է Ռուսաստանին Դօրի դաշտապալարի հիւսիս-արեւմտեան մասը: 7) Ռու- սաստանը զիջում է Եապօնիային չինական արեւելեան երկաթուղու գրամաղուէլը և նրան պատկանող բոլոր իրաւունքները: 8) Պորտ- Արտուր, Տալինյան, Վէյ-Սայ-Վէյ, Կիաօ- Չաու վերադարձնվում են Չինաստանին:

Եւ բոլոր այդ լրբութիւնները, նկատում է «Новое Время» լրագիրը, հետեւեալ են այն հեշտ յաղթութեան, որ Եապօնիան տարաւ Չի- նաստանի վրա 1895-ին:

—«Новое Время» լրագիրը ապել է Եապօ- նական զօրքի կազմութեան և թիւի մասին մի յօդուած, որից երևում է, որ Եապօնական զօ- րը պատերազմի ժամանակ բաղկացած է 400,000 հոգուց 1138 թնդանօթներով: Եապօ- նական զօրքը, համաձայն ընդհանուր վիպու- թիւնների, աւելացնում է լրագրից, արժանա- ցել է միշտ գովասանքի բոլոր այն դէպքերում, երբ նրան պատահել է կռել. նա կատարելա- պէս արհամարհում է վտանգը և կանգնում է միշտ տեղացող կրակի տակ: Հաղորդելով այս տեղեկութիւնները, ուստ լրագիրը ասում է, որ «պատերազմական աղոթութեան ամենագլ- խաւոր պայմաններից մինը այն է, որ երբեք չարհամարհեն հակառակորդին և լուրջ կերպով ուսումնասիրեն նրա զօրքի և թոյլ կողմերը: Ոչ մի կասկած չը կայ, որ մեր զօրքի հազա- գիւտ, հիսնալի և հանրածանօթ յատկութիւն- ները ի նկատի ունենալով, երբ մենք հանդի- պենք. Եապօնացիները հետ, նրանց ջարդ ու փշուր կանխը, բայց պէտք է խոյ տալ ցա- ւալի սխալները և մոռանալ այժմ «անախբօ-

ներդրում դարձած աֆորիզմը, թէ «գլխահարկը կը ծածկենք նրանց» (шапками закроемъ)»:

— Բաւական է խաղաղասիրութիւնը, բաւական է սպասել զէպերին, հասել է գործելու ժամը և ցոյց տալու ահապէս Ռուսաստանի ոյժը և իսկական գործելունը» — գրում է «НОВОЕ ВРЕМЯ» լրագիրը: Եւրոպացիները նենգութեամբ յարձակվեցին մեր նաւատորմի վրա, բայց թող զբաւնուի ուս սրտերը չը վրդովեն: Մեր պատմութեան մէջ այդպիսի զէպեր չառանգած են եղել: Ասիացիները միշտ նենգորէն են կարծում: Միթէ մենք չենք յիշում, թէ ինչպէս նենգորէն մտան մեր սահմանները բուխարական և կովկասեան գործերը: Դաւաճանութիւնը հայթայթում էր մեր թշնամիներին ժամանակաւոր աշտուղութիւն, բայց նա միշտ վերջի վերջոյ պատժուում էր: Եւրոպացիները յետ չեն մնում ասիացիներին նենգութեան մէջ. նրանք ևս առանց պատերազմ յայտարարելու գիշերով յարձակվեցին մեր նաւատորմի վրա, նրանք ցնծում են, թէ և աշտուղութիւնը կասկածելի է, բայց կուի բաղդը որոշվում է ոչ ծովի վրա. եւրոպացիները դեռ դէմ առ դէմ կը կանգնեն ուս գինուրի հետ ցամաքի վրա և այն ժամանակ մենք հաշիւ կը տեսնենք նրանց ինքնապատասխանութեան և նենգաւորութեան համար»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐՆԵՐ

— Նորերս աւստրիական արտաքին գործերի մինիստր կոմս Գոլուխովսկին ուղարկական պատգամաւորութեան արտաքին գործերի մասնաժողովի մէջ մի քանի կարեւոր բացատրութիւններ տուեց մակեդոնական գործերի մասին: Պատգամաւորներից մէկը, գոլուխովսկի, հարցրեց, արդեօք մինիստրը չէ՞ կարծում, թէ ջանքի որ բեֆօրմները գործադրութիւնը այդքան դանդաղ է ընթանում, յիշատակական տարբերք չեն սպասի աւստրո-սլոնական խաղաղ ծրագրի իրագործման և նորից գէշեր կը դիմեն: Այդ պատճառով ծաղիկ ցանկանում է իմանալ, արդեօք գոլուխովսկին ունի՞ այդ զէպի համար գործողութեան որոշ ծրագիր և ձեռք առնված են միջոցներ՝ անակնկալ զէպերի տուալն առնելու համար: Մինիստր Գոլուխովսկին պատասխանեց, թէ ջանքի որ բեֆօրմները իրագործվեն, ակնկալված խաղաղացումը անպատճառ առաջ կը գնայ Բալկանեան թերակղզու վրա և խոտուութիւնները չեն կարող լայն ծառայ տալու: Մինչև այսօր մշակված չէ Ռուսաստանի հետ որ և է համաձայնութիւն այն զէպի առիթով, թէ ինչ պէտք է անել, եթէ բեֆօրմների իրականացման ծրագիրը քանդվի: Անկասկած է, որ ոչ Աւստրիան, ոչ Ռուսաստանը մտադրութիւն չունեն նուաճումներ անել: Գաղափարը պետութիւնները հաստատու կերպով պէտք է պահպանեն status quo և ստիպեն բալկանեան ազգերին՝ պահպանել հանգստութիւն. յոյս կայ, որ այդ վերջինները վստահաբար կը սպասեն աւստրո-սլոնական ծրագրի կատարման: Եթէ անհրաժեշտութիւն լինի աւելի հեռու գնալ, կասկած չը կայ, որ Աւստրիան բոլոր հարցերում ձեռք ձեռքի տուած կընթանայ Ռուսաստանի հետ: Այդ մասին կատարեալ համաձայնութիւն կայ Վիեննայի և Պետերբուրգի մէջ:

— Եւրոպական մի քանի լրագիրներ երկիւղ յայտնեցին, որ Հեռու-Արեւելքի զէպերից թիւրքիսն օգուտ կարող է քաղել և դժուարութիւններ յարուցանել Բալկանեան թերակղզու վրա, բեֆօրմների իրագործումը խափանելու համար, կամ մակեդոնացիները կարող են վերակենդանացաւորական գործողութիւնները, որոնք նոյնպէս արգելք կը հանդիսանան բեֆօրմների իրագործման: Այդ առիթով, ֆրանսիական լրագիրները հարցրում են, որ Ռուսաստանը եւրոպական մասում այնքան զինուորական ոյժ միշտ պարտաստ կուենայ, որ բաւական կը լինի ամեն քաղէ որ և է պատահականութեան առաջն տուեն:

— «Русь» լրագրին հարցրում են Պոլսից, թէ այնպէս զիջումաւորական շրջաններում լուրջ կերպով երկիւղ են կրում, որ Հեռու-Արեւելքում պատերազմ եթէ լինի, շատ շուտով էլ պատերազմ կը ծագէ և Բալկանեան թերակղզու վրա:

«ՄՇԱԿԻ» ՀՅՈՒՄՈՐԻՍՏԵՐԸ

ՌՈՒՍՅՑ ԳՈՒՐՄԱԿԱՆՈՒԹԻՒՆԵՐ

31 յունվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Գերեզմալ-էյտանաւ Սաէս-սէլ 3-դ սերիբեան զօրաբաժնի հրամանատար է նշանակված:

Յունվարի 30-ին Նիվայի գահաժառանգ լան Սէիլ-Ասֆէնդիար-Տիւրքային ունկնդրութեան ընդունելութեան թագաւոր Կայսրը, որի ժամանակ բարձր հիւրը յանձնեց Նիվայի խանի ինքնագիր նամակը:

Հաղորդվում է հայրենասիրական նուիրատուութիւնների մասին: Սեկստուպոլի դուման նուիրեց 5000 ռ., Իւրիւմով, քաղաքը—1000 ռ., Աստրախանով քորային ընկերութիւնը

—15,000 ռ., Բոստովում Դոնի վրա դուման —50,000 ռ., Նախիչևանի դուման—20,000 ռ., Օրէնբուրգի դուման—5000 ռ., Տամբովի դուման—10,000 ռ., Սեմիպալատինսկի դուման —2,900 ռ., Կալուգայի դուման—5000 ռ., Աստրախանի դուման 50,000 ռ., Ժիտոմիրի դուման որոշեց յատկացնել դումաներ 50 մահճակալներ պատրաստելու և պահելու համար և ֆոնդ՝ նպատակներ տալու ժիտոմիրցի սպանված և վերաւորված զինուորականներ ընտանիքներին:

ԲԻԲԻՆՍԿ: Երկաթուղու գլխաւոր արհեստանոցներում, ծառայողներին, վարպետներին և բանտրներին ներկայութեամբ, վերաւորվեցին ջերմ աղօթքներ թագաւոր Կայսրի արեւադարձեան և յաղթութիւն պարգևելու համար:

ԲԱՅՈՒՆ: Նահանգապետի տան առաջ հայրենասիրական ցոյց կազմվեց. աչքի էր ընկնում աշակերտների խումբը թագաւոր Կայսրի պատկերով:

ՏՕՄՍԿ: Կարմիր Նաչի հրաւերն ընդունեց բժշկական ֆակուլտետի ամբողջ հիւնդերը կուրսը:

ՎԼԱԴԻՄԻՐ: Դուման որոշեց արկանել առոտ թագաւոր Կայսրի հաւատարմի հպատակութեան զգացմունքները, յատկացնել 20,000 ռ. ի նպատակ վերաւորեաների և հանգանակութիւն բանալ:

ԼՈՆԴՈՆ: («Բէյտ. գործ.»): Եւրոպական զեպանութիւնը հարցրեց, որ յունվարի 29-ին եւրոպական «Յէնզիւմբուր» և «Նախանուրամարու» առեւտրական նաւերը, որոնք պատկանում էին մասնաւոր ընկերութիւններին, շրջապատվեցին և չորս ուսական նաւերի յարձակման ենթարկվեցին: «Նախանուրամարու» նաւը ջրի տակը գնաց, իսկ «Յէնզիւմբուր» նաւը հեռացաւ անվնաս: ՊԱՐԻԶ: Ռուսահպատակ Լուրան, որը նորերս սպանութեան փորձ փորձեց Մաքս Նորդաուի կիսնքի դէմ, խելագար ճանաչվեց և ուղարկվեց գլխաւոր:

ՊԵՐՏԻՄ: («Բէյտ. գործ.»): Անցան, գնալով ըստ երեկոյթին զէպի Ջիւրուտի, ռուսաց պատերազմական նաւերը՝ երկու ակնանաւերի և կամաւոր նաւատորմի մի շողանաւի ուղեկցութեամբ:

ՍՕՖԻԱ: (Սեփական թղթակցից): Այստեղ Կ. Պոլսից սպաւում է այնտեղի դիւլոմատիկական գործակալ Նաչկիլէ: Նրա յանկարծակի ուղեւորութիւնը խաղաղութեան առաւելագույն դարձել:

ՀՌՕՄ: Միացեալ-Նահանգների զեպանի բացակայութեան պատճառով առաջին բարտուղար Իդլինգ արտաքին գործերի մինիստրին զեկուցում արեց Չինաստանի չէզոքութեան հարաւորութեան վերաբերմամբ: Կարծում են, որ իտալական կառավարութիւնը սկզբունքով համակրութեամբ է վերաբերվում Միացեալ-Նահանգների առաջարկութեան:

ՊԱՐԻԶ: Պատերազմ յայտարարվելուց յետոյ արտաքին գործերի, ծովային և կոլոնիալների մինիստրները անյապաղ ծանուցին օֆիցերներին և պաշտօնեաներին՝ խստագոյն չէզոքութեան պահպանելու մասին պատերազմող կողմերի վերաբերմամբ:

ԼՈՆԴՈՆ: («Բէյտ. գործ.»): Լորդերի ժողով: Լանդօուս յայտարարում է, որ հիմքից գուրկ է հնարովի է այն լուրը, որ եւրոպացիներին թոյլատրված է օգուտ քաղել Վէյնպոլէյից, որպէս նաւատորմի գործողութիւնների բազիսից:

ԵՕԿՕԼՄԱ: («Բէյտ. գործ.»): Ռուսական զեպանութեան և հիւպատոսութեան կազմը յունվարի 30-ին նաեւ նաւերը: Ռուսահպատակները պաշտպանութիւնը եւրոպայում յանձն առաւ Տօկիոյ ֆրանսիական զեպանութիւնը:

ՍՕՄԱՎԱ: Յունվարի 30-ին, երկույթան, բազմահազար ամբողջ հայրենասիրական ցոյց արեց զենեքալ-Նահանգապետի տան առաջ: Նոցա Բարձրութիւնները դուրս էին գալիս պառնդմամբ: Մեն Իշխանը շնորհակալութիւն յայտնեց ամբողջին, վերջինս շարժվեց զէպի նահանգապետի տունը, որը դուրս էր գալիս զէպի դուրսը: Յոյց անողներին մօտ թատրոններից դուրս էին գալիս նուազաւորները և կատարում էին աղագին օրհներգը: Իվիւրկայեա մատուռի մօտ բազմաթիւ ամբողջ ծուռ էր չորեւ ձիւ մէջ և աղօթում էր յաղթութեան համար: Արհեստաւորների ընկերութիւնը յատկացրեց 10,000 ռ. ջի նպատակ վերաւորված զինուորականներին: Վճոված է պատան տալ չքաւորագոյն զինուորական-արհեստաւորներին:

ԹԵՐՕՒՍԻԱ: Դուման, մաղթանք կատարելով, որոշեց յատկացնել 5000 ռ. ի նպատակ Կարմիր Նաչի: Կարաիմեան սինագոգում մաղթանք կատարվեց: ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Բարձրագոյն հրամայված է կազմակերպել 9-դ արեւելեան-սերիբեան հրա-ցանաձիգ բրիգադա, որ բաղկացած կը լինի 33-դ, 34-դ և 35-դ արեւելեան սերիբեան հրա-ցանաձիգ զնդերից: ՆԱՅԱՍՍԿԻ: («Բէյտ. գործ.»): Չինական խոտանի խմբերը Նիւ-Չիւանի շրջակայնե-րում ամեն տեղ կտրուվեցին հեռագրական և տէ-լեֆօնային թիւերը: Ցամաքային հաղորդակցութիւնը Դալնիի հետ ընդհատված է: ՊԱՐԻԶ: («Բէյտ. գործ.»): Հաղորդում է, որ իբր թէ եւրոպական ակնանաւերը, որոնք երկուշաբթի երեկոյեան մտել էին Պորտ-Ար-տուրի դրսի նաւահանգիստը, օգուտ քաղեցին այդ ժամանակ ուսական աղբանշաններին: Այդ երեք եւրոպական ակնանաւերը ծովի տակը գնացին: Նաւերի վրա ծառայողների մեծ մասը խելագրվեց:

ՍՕՖԻԱ: Ռուսական նաւերի վրա յարձակման լուրը մեծ տպաւորութիւն գործեց պաշտօնական շրջաններին և ազգաբնակչութեան վրա: Սօֆիայի քաղաքային դուման մաղթանք նշանակեց ռուսաց զէպին յաղթութիւն շնորհելու մասին:

ՊԵՐՏԻՄ: Չինական արմատական կուսակցութիւնը զէպի Ռուսաստանը իր համակրութիւնը յայտնեց կոմս Լամարգիին, յայտնելով ի միջի այլոց, անկեալ բարեմալութիւնը: «Եւ թող յաղթէ ուս ժողովուրդը իր բոլոր թշնամիներին յօգուտ մարդկութեան և ի բարօրութիւն բոլոր սլաւեանների»:

ՎԱՇԻՆԳՏՈՆ: («Բէյտ. գործ.»): Եւրոպական միսսիան հեռագիր ստացաւ, որի մէջ առաջին անգամ խօսվում է եւրոպական կորուստների մասին Պորտ-Արտուրի մօտ տեղի ունեցած պատերազմի մէջ. սպանված են 4 եւրոպացիներ և վերաւորված են 54, բոլորը ակնանա-նաւերից: Եւրոպական ուրիշ նաւերի ծառայողները անվնաս մնացին:

ՏՕԿԻՕ: Չինական կառավարութիւնը երեկ շրջաբերական հրատարակեց Չինաստանի չէզոքութեան մասին: ԲԵՐԼԻՆ: Գերմանական «Հանզա» կրէյսէրը երեկ եկաւ Պորտ-Արտուր և գնաց զէպի Յիւն-Չիւան գերմանական կանանց, մանուկների և պոստի հետ միասին:

ԼՈՆԴՈՆ: («Բէյտ. գործ.»): Տօկիոյ եւրոպական միսսիայի ստացած հեռագիրները հա-ղորդում են, որ «Վարեագ» կրէյսէրից և «Կօրէնց» մարտանաւից, նոյնպէս և ընկած «Սունգար» փոխադրող նաւից բոլոր կենդանի մնացած մարդկանց ընդունեցին Չէմուլպոուսի անդհամ անդրկական, ֆրանսիական և իտա-լական պատերազմական նաւերը: Ռուսաց զեպանը Սէուլում խնդրեց ամէրիկական զեպանին բոլոր կենդանի մնացածներին ամէրի-կական շոգենաւերով բերել Շանհայ և Չիֆու:

Փրանսիական գործերի հաւատարմատարը Սէուլում առաջարկեց այնտեղի եւրոպական զեպանին Չիֆու ուղարկել մարդկանց ֆրանսիական «Պապալ» կրէյսէրով: Եւրոպական զեպանը թոյլտուութիւն ստացաւ ընդունել այդ առաջարկութիւնը այն պայմանով, որ ռուսական նաւերի վրա ծառայողների մնացած մասը կը տարվի Շանհայ և որ Ռուսաստանը պարտաւորվում է չը թոյլատրել նրանց ու-ղեւորվելու Շանհայից զէպի հիւսիս ներկայ պատերազմական գործողութիւնների ընթաց-քում:

ՍՈՒԷՑ: («Բէյտ. գործ.»): Կառավարութիւ-նը միջոց Ռուսաստանի միջնորդութիւնը՝ Պորտ-Սալիդից, ֆրանսիացի յետոյ եկած ու-սական ակնանաւը նաւաշինարան մտցնելու թոյլտուութեան մասին:

ԲԵՐԼԻՆ: «National Zeitung» նկատում է, որ գերմանական ժողովրդի տրամադրութիւնը հանգիստ է: Գերմանական ստորադժուած է այն արեւելքի, որով ուսական-փորձութիւն նա-ւերը, չը նայելով եւրոպական նաւատորմի կտրական գերակշռութեան, կուի մէջ մտան Չէմուլպոուս: Լրագիրը վերջապէս յիշատակում է «Վարեագ» կրէյսէրի հրամանատարի հերո-սական բաշխարհութիւնը, որը, նաեւ հեռա-ցնելով ծառայողներին, միայնակ մնաց կրէյսէ-րի վրա և օդը թոցրեց նրան:

ԲԵՐԼԻՆ: («Բէյտ. Անցեյդեր») լրագիրը յայ-տարարում է, որ համեմատ ուսական եւրոպա-կան կառավարութիւնների համաձայնութեան, վերջիշաբթի պետութիւններին միջնաւերի ունի պատերազմ. այդ պատճառով իւրաքանչիւր գերմանահպատակ, թէ կայսրութեան մէջ, նոյնպէս կօլոնիաներում և արտասահմանում պարտաւոր է խուսափել այնպիսի գործողու-թիւններից, որոնք հակասում են Գերմանիայի չէզոքութեան:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Վերացված են պալատական պարահանդէսները Բարձրագոյն պալատում:

Ալէքսանդր III Կայսրի գնդի հրամանատար գնդապետ Էնկ Կայսր ժամանեց Բերլինից՝ գնդի անունից թագաւոր Կայսրին յանձնելու համար պատմական գնդային գլխաւորը:

Ծովային գլխաւոր շտաբի պաշտօնակատար կօնտր-ծովապետ Բօթլէստովսկի ուղեւորվում է զէպի Հեռու-Արեւելք: Գերեզմալ-մայօր Ֆլուգի հեռագիրը Պորտ-Արտուրից գլխաւոր շտաբին 1904 թվի յունվարի 31-ից. «Չեկու-ցանում եմ, որ վերջին օրերս գրութեան մէջ ոչինչ փոփոխութիւններ տեղի չեն ունեցել: Ստացված տեղեկութիւնների համեմատ, Իսկո-յում յունվարի 29-ին երկույթան ծովափի վրա նկատվում էին շնամական նաւերի կրակները: Յունվարի 30-ին տեղեկութիւններ են ստաց-ված, որ Տատունգօի նաւակայարանում երե-ւացել են թշնամու 6 զբահիլներ: Լալում էին թնդանթաճութեան ձայներ: Ռուսական Եօնասիպօ աւանի ծառայողների ընտանիքները կօրէյական ամիցը անցան Շախէրգա: Մի-ջոցներ են ձեռք առված տեղեկութիւններ հա-ւաքելու համար: Կօրէյում գործերի գրութեան մասին տեղեկութիւնները ստացված են Շանհ-այից և Տեանցիից: Նրանք, ընդհանրապէս, անորոշ են և միայն այն կարելի է հասկնալ, որ եւրոպական զօրաբաժնիները ափ են իջնում ծովափի զանազան կէտերում: Տեղեկութիւն-ներ են համեմատ, Չէմուլպոուս յունվարի 29-ին սպաւում էր, որ մեծ քանակութեամբ գործեր են ափ իջնելու: Չիֆուից ստացված մասնա-ւոր տեղեկութիւնների համեմատ, եւրոպա-կան էսկադրան, Պորտ-Արտուրի մօտ եղած ընդհարումից յետոյ, նշանաւոր միասնի կրեց և մօտեցաւ Չիֆուին, ունենալով երեք մեծ նաւեր նաւաբարդ պարանի վրա, իսկ երկու էլ ուրիշ նաւեր կողբերից:

1 փետրվարի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Կատարվում է պահեստի զին-ւորների մօրիլդացիա Պէրմի նահանգի Կա-միլյովսկի, Իրիկովսկի, Շախէրսկի և Վերխո-տուրսկի գաւառներում: Եկատերբուրգեան գաւառում իսկական ծառայութեան են կանչ-վում նաւատորմի պահեստի զինւորները:

ՎԱՐՇԱՎԱ: Յունվարի 31-ին Ամրոցի բաղը մտան համարաբանի և պոլիտէխնիկական ու-սանաւորածական ինստիտուտների ուսանող-ները, ուղեկցութեամբ անագին ամբոյի և ազգային ինքնը երգելով: Երբ դուրս եկաւ երկրի հրամանատարը, ուսանողները ձեռքերի վրա բարձրացրին նրան «ուրա» աղաղակելով: Այսպէս նոյնպիսի ցոյց տեղի ունեցաւ Փրանսիական հիւպատոսարանի առջև:

ՏՄԻՆԻՆ: Բաղաւորւմ երկույթան տեղի ու-նեցաւ հայրենասիրական ցոյց: Բօրային կօ-միտէտը հաւաքեց աւելի քան 6000 ռ. ի նպատակ վերաւորվածների ընտանիքներին:

ՀՌՕՄ: Պէլինի իտալական միսսիան ծա-նուցեց, որ Պէլինում սարսափ է տրուում, որովհետեւ երկիւղ են կրում, որ ուսանողը կը գրաւեն քաղաքը: Պալատը, սակայն, մտադիր չէ հեռանալ մայրաքաղաքից, որովհետեւ միս-սիան հաւատացրեց, որ լուրը անհիմն է:

ՎԻԿՏՕՐԻԱ: Կանադեան խաղաղ-ուղիական-կան երկաթուղուց պատկանող շոգենաւային «Էմպրէս» գիծը հրաժարվեց ուսեստի պա-շարներ հայթայթելուց, որովհետեւ ուսեստի պաշարները պատերազմական կօնտրաբանդա են կազմում:

ՆԻԻԷՐՕԻԿ: Հանրապետական կուրի բան-կէտում ծովային գործերի պետական բարոու-ղաբը յայտնեց. «Մենք չէզոքութիւն կը պահ-պանենք: Մեր շահն է միայն, որ պատերազմը շուտ վերջանայ և մեր միակ հոգան է, որպէս գի պետութիւններից ոչ մէկը պատերազմի մէջ չը խառնվի: Ոչինչ հանգամանքներ չը կան, որոնք, նրա համոզմունքով, կարողանա-յին ստիպել մեր ազգին վախենալու խաղա-ղութեան խախտումից»:

ԲԵՐԼԻՆ: Ռուսական զէպին յաղթութիւն պարգևելու համար միտաօլոսի կատարած մաղթանքին ներկայ էին գահաժառանգը, ռու-սական միսսիայի անդամները, կառավարու-թիւնների և սկուլպչիներին ներկայացուցիչնե-րը և բազմաթիւ հասարակութիւն: Թագաւորը մի փոքր տկար է և տանից դուրս չէ գալիս:

ԲԵՐԼԻՆ: Գերմանիան հէնց սկզբից պաշտ-պանում էր ամէրիկական առաջարկութիւնը չէզոքութեան մասին, Լալան երկու պատերազ-մող կողմերի պատերազմական գործունէու-թիւնը չը սահմանափակելու պայմանով:

ՊԱՐԻԶ: Այստեղ կը ստորագրվի համաձայ-նութիւնը Փրանսիայի և Սիւամի միջև, վեր-ջինս Դիւլիսէի պահանջած զիջումներն արեց: Փրանսիան կը ամբողջ Զանաբուրգը միայն

